րա տեղ նշանակեց Խօջաէնիաթեան Բարեկ. Թադէոս քահանային, առաջնոյն յայտնելով հրապարակական շնորհակալութիւն իւր բազմամեայ արդիւնաւոր ծառայութեան համար, իսկ երկրորդին ցանկալով յաջողութիւն և ջերմեռանդութիւն իւր գործունէութեան ասպարիզում.

***

Տփխիսու Բարեգործական Ընկերութեան մեծարգոյ Անդամները իւրեանց առանձին գրութեամբ դիմելով Ազգիս Վեհ. Հայրապետին՝ խնդրեցին Նորա Հայրապետական խնամակալութիւն. Նորին Վեհափառութիւնը ամենաքաղցր հաճութեամբ սրտի ընդունելով յիշեալ ազգօգուտ ընկերութեան խնդիրը՝ ի նպաստ և յարդիւնաւորութիւն ջանից ընկերութեան՝ բարեհաճեցաւ միջոցաւ Ս. Սինօդին պատուիրել ամենայն Վիճակային Ատենից Հայոց Ռուսաստանի՝ թոյլատրել ընկերութեանը ամենայն եկեղեցիներում, ուր յարմար ու պատշաճ կհամարին, ունենալ գանձանակագրամոց առանձին արկղ իւր կնքով և կարգադրութեամբ պահպանուած.

ՅՕՐԱԳՐՈՒԹԵՆԷ ՍԻՆՕԴԻ.

Ի 29 Յունվարի 1882 ամի. Որովհետեւ Յովհաննէս քահանայն Ռստակեան Յանձառ գեղջ կողմանցն Ղարսայ առանց ստուգելոյ օրինաւոր կարգաւ զայրամբի եւ ամուրի գոլն Ալէքսանդրապօլցի Մինասայ Ստեփաննեանց՝ առ կենդանութեամբ առաջին կնոջն կատարեալ է զապօրինի պսակ նորա ընդ Արղուխնցի Աննայի Զիթապախեանց, վասնորոյ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ անորոշ ժամանակաւ եւ առաքել յապաշխարութիւն ի վանս Անւոյ ընդ հսկողութեամբ վանահօրն: Եւ զՅակոբ քահանայն Պապիկեանց, որ ի ժամ կատարման պսակի կատարեալ է զպաշտօն դպրի՝ ենթարկել ապաշխարանաց առ դրան եկեղեցւոյ, որոյ միաբան է, առանց փիլոնի ընդ հսկողութեամբ աւագ քահանայի տեղւոյն՝ զերիս քառասունս աւուրս սաղմոս ի ծնրին ընթեռնուլ ի ժամերգութեան պահու. Իսկ զպսակն լուծեալ հրատարակել:

Ի 24 փետրվարի 1882 ամի. Որովհետեւ ուսուցիչն հին Խրիմու Տփխիսեցի Վաղարշակ Բէլլուբէկեանց զնուիրագրամս հանգանակեալս իւր եւ յԱզգայնոց տեղւոյն ի նպաստ սովելոց Հայոց Տաճկաստանի՝ գործադրեալ է՝ ոչ ըստ նպատակին, այլ յօգուտ իւր զաղաքար. վասնորոյ Ս. Սինօդն Հր—մ—յէ—ց զանհարազատ եւ զխարդախումն գործողութենէ յիշեալ Վաղարշակայ Բէլլուբէկեանց ծանուցանել համայն Վիճակային Ատենից Հայոց եւ Հոգ. Կառավարութեանց, պատուիրել նոցին, արգելուլ նմա մտանել յոր եւ իցէ պաշտօն ի դպրոցս կամ յայլ Հոգեւոր հաստատութիւնս զանազանեալս ընդ տեսչութեամբ իւրեանց եւ զխարդախութենէ նորա հրատարակել ի գիտութիւն ամենից միջոցաւ Ար—ր—տ ամսագրոյ: